

4. Բննվող ժամանակաշրջանին առնչվող տվյալները տալիս են մոտավորապես հետևյալ պատկերը. Ախալցխայի բնակչության ընդհանուր թիվը տատանվել է մոտ 11.000 - 20.000 մարդու սահմաններում, որոնց թվում հայերը կազմել են նվազագույնը 63,1 տոկոս, առավելագույնը՝ 93,7 տոկոս, Գրեաները համապատասխանաբար՝ 6,0 - 15,1 տոկոս, վրացիները՝ 1,7 - 6,5 տոկոս, ռուսները՝ 0,4 - 10,2 տոկոս /վերջին թիվը ներառում է թերևս նաև զինվորությունը/, Իռլանդները՝ 0,3 - 0,4 տոկոս և այլն:

5. 19-րդ դ. երկրորդ քառորդից սկսած, գերակշռող լինելով Ախալցխայի բնակչության մեջ, հայ տարրն ստեղծում է ուրույն քաղաքային կենցաղ, որը շատ զձերով համահունչ է 19-րդ դ. - 20-րդ դ. ըսկզբի Անդրկովկասի հայ քաղաքային մշակույթին և հանդես է գալիս որպես դրա բաղկացուցիչ մաս:

Ն.Գ.ՄԽԹԱՐՅԱՆ

ԵՊՀ

ՎԱՀԵՎԱՀՅԱՆ ՄԵՀՅԱՆԻ ԵՐԵՔ ԲԱԳԻՆԸ

1. Աշտիշատի Վահեվահյան Մեհյանը և, ընդհանրապես, Աշտիշատը մեր պատմիչներին հայտնի է որպես հայ հեթանոսական պաշտամունքի խոշորագույն կենտրոն: Աշտիշատի մասին հիշատակություններ ունեն Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը, Ազաթանգեղոսը, Հովհան Մամիկոնյանը: Մովսես Խորենացին հիշատակում է, որ Աշտիշատում է գտնվել Վահագն աստծո մեհյանը: Պատմահայրը գիտե նաև այդ աստծո սպասավորությանը նվիրված քրմական ընտանիքը՝ Վահունիներին:

2. Մեհյանի մասին ավելի մանրամասն տեղեկություններ է տալիս Ազաթանգեղոսը. «... Եւ իբրև եկն եհաս ի սահմանս Հայոց՝ լուաւ Գրիգորիս, թէ Վահեվանեան մեհեանն մնացել է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծազանձ, լի ոսկով և արծաթով և քազում նուէրի մեծամեծ թագաւորաց ծօնեալ անդ. ութերորդ պաշտօն հռչակաւոր, սահմանեալն Վիշապաքաղե Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց, ի սնարու լերինն Քարբեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդեպ հայի մեծի լերինն Տաւրոսի, որ և անուանեալ ըստ յամախաշատ պաշտաման տեղեացն»

Յաշտիշատ: Զի յայեժամ դեռ ևս շեն կային երեք բազինք ի նմա առաջին՝ մեհեանն վահանեան, երկրորդն Ոսկեմօր Ոսկեծին դից և բազինն իսկ յայս անուն անուանեալ Ոսկեհատ Ոսկեմօր դից, և երրորդ՝ մեհեանն անուանեալ Ասողկան դից, սենեակ վահազնի կարդացեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտէս ... »:

3. Ներկայում ընդունված տեսակետ է, որ Աշտիշատի թվարկված բազինները պատկանել են Անահիտին /Ոսկեմայր/, Վահազին. և Ասողիկին /Ափրոդիտե/: Եթե մի պահ վերանալու լինենք հատուկ անուններին, ապա կստացվի, որ Աշտիշատի մեհյանը ծնված էր Մորը, Ռոդուն և Աիրեցյալին:

4. Մեկ այլ հետաքրքրական բազինի մասին վկայութուններ կան Մովսես Խորենացու, «Թուղթ առ Սահակ Արծրունի» երկում: Այստեղ պատմվում է Անձևացյաց զավառի Դարբնաց քար կոչված մեհյանի մասին, որտեղ, ինչպես կարելի է եզրակացնել նրա հաղորդած տեղեկութուններից, հաստատված էին Անահիտի և Միրի բազինները /Մովսես Խորենացին իր, «Պատմության» մեջ Միրիին նույնացնում է Հեփեստոսի հետ, իսկ Հեփեստոսը դարբին էր/: Նշենք նաև, որ թեպետ Վահազը և Միրը երբեք չեն նույնացվել /Վահազին Մովսես Խորենացին նույնացնում է Հերակլեսի հետ/, այնուամենայնիվ, ընդհանուր շատ գծեր ունեն որպես կրակի և լույսի խորհրդանիշներ:

5. Մոր և որդու այս համատեղ պաշտամունքը շատ է հիշեցնում վաղ դասակարգային հասարակության ամենատարածված պաշտամունքը, որ բնորոշ էր երկրագործական մշակույթի բոլոր երկրներին՝ Մեծ մոր և նրա ուղեկցի՝ միաժամանակ ամուսնու և որդու պաշտամունքը, Փոյուզիայում այդ գուլյը կոչվում էր Կյուբեդե և Ատտիս, Փյունիկիայում՝ Աստարտե և Ադոնիս, Ասորեստանում՝ Իշտար և Թամուզ: Պատահական չէ, որ իր պաշտամունքի բնորոշ գիծը՝ կրոնական հետերիզմը, հայոց Անահիտ Տիկինը, ըստ ուսումնասիրողների, փոխ էր առել Իշտարից: Հայաստանում այդ գուլյը ևս ուներ իր անունը՝ Արա Գեղեցիկ և Շամիրամ: Որ Շամիրամը հայոց հողի վրա նույնացվել է փոքրասիական Մայր դիցուհուն և Անահիտին, այսօր արդեն ապացուցման կարիք չի գգում: Ուշադրության է արժանի մեկ ուրիշ դրվագ: Խորենացին որպես Շամիրամի ուղեկիցներ հիշատակում է երկու Արա՝ Արա Գեղեցիկին և նրա որդուն՝ Արայան

Արային, որ ապրում և մեռնում է Շամիրամի հետ: Եթե քրիստոնեական աշխարհայացքը կարողացել է խթարել առասպելի նախնական տարբերակը՝ Արան Մովսես Խորենացու երկում հարուժյուն չի առնում, ապա պահպանել է հնագույն առասպելին ընդորոշ գործող անձանց՝ Մայր, և որդի ու տարփածու միաժամանակ՝ Մովսես Խորենացուն նրանք հասել են արդեն երրորդուժյուն դարձած՝ Մայր և սիրուհի /Շամիրամ/, Արա Գեղեցիկ /սիրեցյալ/ և Արայան Արա /որդի/:

6. Կարող ենք, արդյոք, եզրակացնել, որ Աշտիշատում էլ հայկական-իրանական աստվածությունները կրում են ավելի հին ու գորեղ պաշտամունքի հետքեր: Միայն այստեղ երկատվել է Մայրը. երրորդուժյունը դարձել է Մայր /Ոսկեմայր Անահիտ/, Որդի /Վահագն/ և սիրուհի /Աստղիկ/:

Երկրագործության հնագույն մեռնող և հառնող աստվածը դրոշմ է դրել նաև Միհրի վրա: Ժողովրդի հիշողության մեջ նա ապրել է որպես մեծ ու Փոքր Մհեր: Վերջինս չի մահանում, նա հավեռ կենդանի է և պիտի զա՝ ահեղ դատաստանի օրը:

Ա.Ս.ՄԿՐՏՁԵԱՆ

ՀԱԻ

ՀԽՍՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՎՈՐԳԻ

ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

1. Տոները մի շարք գիտությունների ուսումնասիրության առարկա են և հետազոտվում են ամենատարբեր տեսանկյուններով: Էթնիկ ընդհանրությունների՝ արդի կենցաղում տոնական համակարգերի տեղի և դերի պարզաբանումը նաև էթնոսոցիոլոգիայի կարևորագույն խնդիրներից է: Այս առումով հետազոտվել են Խորհրդային Հայաստանի գյուղական բնակչության կենցաղում ներկայում տարածված այնպիսի տոներ, որոնք որոշ չափով կարող են ուղեցույց հանդիսանալ հայոց մեջ տոնական համակարգի ուսումնասիրության համար: Դրանք ներկայացնում են տոների երկու մեծ խումբ. ա/ավանդութային-ժողովրդական /նոր տարի, Ջատիկ, Քրիստոսի ծնունդ, Տեսնունդառաջ, Վարդանանց տոն, Համբարձում, Վարդավառ, Սուրբ Աստվածածին, Սուրբ խաչ/ և բ/ հասարակական-քաղաքական